ՀՀ փաստաբանական դպրոցի՝ 2015 թվականի
աշնանային հոսքի ընդունելության քննության հանձնաժողովի
նախագահ պարոն Ս. Բաբայանին

***Դիմորդ, ԼՂՀ դիմորդ, Հատուկ դիմորդ[1]***

Անուն________________________________

Հայրանուն ___________________________ի

Ազգանուն___________________________ից

Էլ.հասցե______________________________

**ԴԻՄՈՒՄ**

Խնդրում եմ թույլատրել ինձ մասնակցել ՀՀ փաստաբանական դպրոցի՝ 2015 թվականի աշնանային հոսքի ընդունելության քննությանը.

1. առկա (ստացիոնար) եղանակով ուսուցման քրեաիրավական կամ քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածության[2] տեղի համար,
2. հեռավար (դիստանցիոն, առցանց) եղանակով ուսուցման քրեաիրավական կամ քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածության[3] տեղի համար,
3. հեռավար (առցանց) եղանակով ուսուցման քրեաիրավական կամ քաղաքացիաիրավական (վարչաիրավական) ուղղվածության[4] տեղի համար՝ որպես ԼՂՀ դիմորդ,
4. առկա (ստացիոնար) եղանակով ուսուցման[5] տեղի համար՝ որպես հատուկ դիմորդ՝
   1) դատախազի առնվազն 10 (տասը) տարվա ստաժ ունեցող տեղի համար,
   2) փաստաբանի առնվազն 10 (տասը) տարվա ստաժ ունեցող տեղի համար,
   3) դատավորի առնվազն 10 (տասը) տարվա ստաժ ունեցող տեղի համար,
   4) իրավաբանական գիտությունների թեկնածուի, իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունեցող տեղի համար:

**Պարտավորվում եմ՝**

1. լրացված տվյալները փոփոխվելու դեպքում անհապաղ սակայն ոչ ուշ, քան 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնել ընդունելության քննության հանձնաժողովին (այսուհետև՝ Հանձնաժողով),
2. Հանձնաժողովի պահանջով ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ:

**Ծանոթացել եմ՝**

1. «ՀՀ փաստաբանական դպրոց» հիմնադրամի կանոնադրությանը,
2. «ՀՀ փաստաբանական դպրոց» հիմնադրամի ընդունելության քննության կարգին,
3. «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի վարչական տարածքում տեսանկարահանում և տեսաձայնագրում իրականացնելու կարգին,
4. ընդունելության քննության գործընթացի ժամանակացույցին:

**Հավաստում եմ,** որ համակարգչից օգտվելու իմ գիտելիքները բավարար են, մասնավորապես համակարգչի ստեղների, մկնիկի միջոցով մոնիտորի վրա նշված հրամանները կատարելու համար:

**Տեղեկացված եմ՝**

1. ծանուցումները ստանալու եմ սույն դիմումի մեջ նշված էլեկտրոնային հասցեին,
2. ընդունելության քննության ընթացքը կտեսանկարահանվի և կտեսաձայնագրվի, ինչպես նաև համացանցի միջոցով առցանց (օնլայն, on-line) կհեռարձակվի,

---

[1] Սուբյեկտի անունը, այն է՝ Դիմորդ, ԼՂՀ դիմորդ, Հատուկ դիմորդ, վերցնել շրջանակի մեջ կամ ընդգծել բառի տակ:
[2] Պատասխանը, այն է՝ քրեաիրավական կամ քաղաքացիաիրավական (վարչաիրավական), վերցնել շրջանակի մեջ կամ ընդգծել բառի տակ:
[3] Տե՛ս նշում թիվ 2:
[4] Տե՛ս նշում թիվ 2:
[5] Պատասխանը վերցնել շրջանակի մեջ կամ ընդգծել բառի տակ:

3. քննական սրահներում և դրան հարակից տարածքներում կարող է տեղադրված լինեն տեխնիկական միջոցների խլացուցիչ սարքեր:

| **Առկայության դեպքում նշե՛լ այն հիմքը, որը Ձեզ հնարավորություն է տալիս ազատվել ընդունելության քննության մասնակցության վճարից:** |
|---|
| ✓ առաջին և երկրորդ խմբերի հաշմանդամ դիմորդները<br>✓ իրենց խնամքին անչափահաս երեխա ունեցող միայնակ ծնողները<br>✓ 25 տարին չլրացած երկկողմանի ծնողազուրկները<br>✓ զոհված զինծառայողի (ազատամարտիկի) զավակները, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած զինծառայողները<br>✓ ԼՂՀ դիմորդները<br>✓ դիմորդները, ովքեր առնվազն 2 (անգամ) մասնակցել են ՀՀ փաստաբանական դպրոցի ընդունելության քննությանը և նախորդ քննությանը հաղթահարել են ընդունելության քննության նվազագույն շեմը |

| Նշե՛լ, եթե հատուկ (օժանդակ) հարմարությունների կարիք ունեք: | |
|---|---|
| Այո | Ոչ |
| Եթե այո, ապա ի՞նչ բնույթի: | |

**Դիմումին կից ներկայացնում եմ՝**

✓ անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
✓ ինքնակենսագրական տվյալներ պարունակող թերթիկը,
✓ 3 x 4 չափսի 3 (երեք) լուսանկար՝ գունավոր, վերջին վեց ամսվա վաղեմության,
✓ ընդունելության քննության մասնակցության վճարի (35000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամ) կամ փաստաթղթերի ստուգման վճարի (20000 (քսան հազար) ՀՀ դրամ) անդորրագրի պատճենը,
✓ բարձրագույն իրավաբանական կրթություն ստացած լինելը հավաստող ավարտական փաստաթղթի պատճենը կամ տեղեկանք բուհից,
✓ օտարերկրյա պետությունում ստացած բարձրագույն իրավաբանական կրթության՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով ճանաչումը և համարժեքության հաստատումը հավաստող փաստաթղթի պատճենը,
✓ հեռավար (առցանց, դիստանցիոն) ուսուցման դիմորդների դեպքում՝ իրավասու մարմնի կողմից տրված տեղեկանք, որը կհավաստի դիմորդի՝ վերջին մեկ տարին Երևան քաղաքից նվազագույնը 80 (ութսուն) կմ հեռավորության վրա փաստացի բնակվելու, այդ թվում՝ դիմելու պահին, հանգամանքը,
✓ առնվազն տասը տարվա փաստաբանի, դատախազի կամ դատավորի աշխատանքային (մասնագիտական) ստաժ ունենալը հավաստող փաստաթուղթ,
✓ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունենալը հավաստող փաստաթուղթ,
✓ գիտական կազմակերպության կողմից հաստատված և հրապարակված գիտական աշխատությունների (հոդվածների) ցանկը,
✓ ՀՀ վաստակավոր իրավաբանի կոչման վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ,
✓ այլ փաստաթղթեր (նշե՛լ):
✓ ______________________________________________________________________
______________________________________________________________________
______________________________________________________________________

Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը՝ ստուգելու ներկայացված փաստաթղթերի իսկությունը, ինչպես նաև ինձ վերաբերող տեղեկությունների հավաստիությունը:

______________________________ ______________________________
**(ստորագրություն)** **(օր,ամիս, տարեթիվ)**